ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 7 *Общественные науки*

Ա. Հակոբյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների Բաժանմունքի «Տեղեկագրի» 1947 թ. № 2-ում ժամքերի փոխանակության կարգով տպագրված է պրոֆ. Ա. Աբրահամյանի «Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը» խորագրով ուշագրավ հոդվածը։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը լուրջ փորձ է կատարում պերիոդիզացիայի ենթարկելու սեր ժողովրդի բազմադարյան պատմությունը։ Հեղինակի կարծիքով հայոց պատմության պերիոդիզացիան «պիտի սահմանափակել հետևյալ ձևով. ա) Հին շրջան—նախնական համայնական հասարակության շրջանից մինչև մեր թվարկության առաջին դարի կեսերը։ բ) Միջին դարեր—մեր թվարկության առաջին դարի կեսերից մինչև 18-րդ դարը ներառյալ, գ) Նոր շրջան—19-րդ դարից մինչև սովետական կարգերի հաստատվելը և դ) Նորագույն շրջան—սովետական ժամանակաշրջան»։[1] Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիան բարդ և դժվարին հարց է։ Այդ դժվարությունը զգացել է նաև պրոֆ. Ա. Աբրահամյանը՝ նշելով, որ նա «հավակնություն չունի պնդելու, որ առաջադրված բոլոր հարցերը հաջողվել է լուծել և նրանց դեմ չի կարելի վիճել։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ մենք համարձակություն ենք վերցրել մեզ վրա դնելու հարցերը։ Եվ իսկապես, հեղինակի հոդվածն ունի ոչ միայն լուրջ վիճելի, այլև առարկելի շատ դրույթներ։

Եթե պրոֆ. Ա. Աբրահամյանը առաջ է քաշել և աշխատել է լուծել «Հայոց պատմության պերիոդիզացիայի հետ կապված սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք հանգուցային հարցեր», ապա մենք մի համեստ փորձ ենք կատարել առաջ քաշելու միայն մեկ հանգուցային հարց—այն է՝ նախաարտաշիսյան հաստատության և նրան նախորդող շրջանի հասարակական և քաղաքական կառուցվածքի հարցը։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր վերոհիշյալ հոդվածում Արտաշիսյան և նրան նախորդող շրջանը բնութագրելիս չի ասում իր վերջին խոսքը։ Նրա հոդվածից այն տպավորությունն է ստացվում, որ այդ շրջանը պետք է ընդունել կամ, որպես ստրկատիրական հասարակական ֆորմացիա, կամ անցման շրջանի հասարակություն, շեշտելով սակայն ստրկական ուկլադի մեծ կշիռը։[2]

---

[1] ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1947 թ. № 2, էջ 44։

[2] Մարկության և ստրկատիրական հասարակական ֆորմացիայի հարցերին մենք խոնարհաբար հաջորդ հոդվածում։

Հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմության հետազոտությունը ամենավին նոր է սկիզբ առնում։ Հայտնի է, որ հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմության հարցերով զբաղվել են մեր անվանի պատմաբան բանասերները։ Առաջին փորձերը կատարել են Ղ. Ինճիճյանը,[1] Ալիշանը,[2] Գարագաշյանը,[3] Ադոնցը,[4] Մառը[5] վրացագետ Ջավախիշվիլին,[6] իսկ սովետական շրջանում այդ բնագավառում անգնահատելի աշխատանք է կատարել ակադեմիկոս Հ. Մանանդյանը։[7] Այդ հարցերը շոշափել են նաև Ա. Սամվելյանը[8] Ա. Աբրահամյանը[9] և ուրիշները։

Հին Հայաստանի պատմությունը մեզ մոտ առաջին անգամ գիտական հիմքերի վրա դրեց Ն. Ադոնցը իր „Армения в эпоху Юстиниана" ծանրակշիռ աշխատության մեջ։ Նա ոչ միայն հանգամանորեն շարադրեց, այլ պատմա-քննական վերլուծության ենթարկեց մեր ժողովրդի հնագույն շրջանի պատմությունը և մշակեց իր օրիգինալ սխեման։

Հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի հիմքում Ն. Ադոնցը դրեց տոհմական կարգերը, տոհմական հարաբերությունների և արյունակցական իրավունքի սկզբունքը։ Տոհմական կարգերն ու արյունակցական իրավունքը ըստ Ադոնցի՝ պատմական զարգացման որոշակի էտապում ենթարկվում են լուրջ փոփոխությունների, տալիս են ճեղքվածքներ, տոհմում առաջանում են նյութական և սոցիալական անհավասարություններ և «սոցիալապես միատարր տոհմը» բռնում է քայքայման ուղին։ Այդ հիմքի վրա ձևավորվում է խոշոր հողատիրությունը, նախաբարական ֆեոդալական դասը և հայկական ֆեոդալիզմը։ Պատմական այդ պրոցեսը իր սկիզբն է առնում շատ հին ժամանակներից և հիմնականում «ավարտվում է Տիգրան Մեծի փոթորկալից էպոխայում»։[10]

Պատմական զարգացման պրոցեսում ծնված «տնտեսական և սոցիալական անհավասարությունները» իրենց հետ բերում են նաև «քաղաքական իշխանությունների անհավասարություններ»։[11] Խոշոր հողատիրությունը

[1] Ղ. Ինճիճյան—«Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Վենետիկ, 1835, հատ. 2-րդ։

[2] Ալիշան—„Այրարատ", Վենետիկ, 1890 թ. և „Հայապատում" (տես «Դուռն Հայոց աշխարհաց» գլուխը)։

[3] Ա. Գարագաշյան—«Քննական պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1895, հատ. 2-րդ։

[4] Н. Адонц—„Армения в эпоху Юстиниана". СПБ, 1908 г., стр. 388—457.

[5] Н. Марр—„Кавказский культурный мир и Армения". СПБ, 1915. Նույնի ընդարձակ քննություն Ջավախովի „Государственный строй древней Грузии и Армении" (տես ЖМНП, 1908 г.

[6] Джавахов— «Государственный строй древней Грузии и Армении». СПБ, 1905 г.

[7] Манандян—«О торговле и городах Армении», Ереван, 1930, стр. 5—18, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Երևան, 1945, էջ 75—85, Նույնի «Проблема общественного строя доаршакидской Армении» (см. «Исторические записки», 1945 г., стр. 3—28.

[8] Ա. Սամվելյան—«Սարկաւագներ հին Հայաստանում» (տես «Պատմության և Գրականության Ինստիտուտի Տեղեկագիր», գիրք II, 1957, էջ 87—140։ Նույնի «Հին հայ իրավունքի պատմություն», հատ. Ա, 1939, էջ 208—319։

[9] Ա. Աբրահամյան—«Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը» (ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 2, էջ 29—44։

[10] Ն. Ադոնց—անդ, էջ 410։

[11] Ն. Ադոնց—անդ, էջ 388, 455։

հանդիսանում է «ոչ միայն ֆեոդալական կարգերի հիմքը», այլև «կարևոր միջոց մարդկանց վրա իշխելու համար»[1] Ֆեոդալիզմի, ֆեոդալական արտադրական հարաբերությունների բնորոշ հատկանիշը Ն. Ադոնցը համարում է «դերագույն քաղաքական իշխանության բաժանվածությունը»։- Ակնհայտ է, որ Ն. Ադոնցը հայ ժողովրդի նախնական շրջանի պատմության հիմքում դնում է երկու հիմնական սկզբունքներ՝ տոհմական կարգերը և այդ կարգերի քայքայման հետևանքով առաջացած ֆեոդալական հարաբերությունները։ Պատմական այս կոնցեպցիան ինչպես մեզ մոտ Ն. Ադոնցը, այնպես էլ ռուս պատմագրության մեջ Սոլովյովը և Կլյուչևսկին զարգացրել են սոցիոլոգիական դպրոցի պատմա-քաղաքական հայացքների ազդեցության ներքո, ազդեցություն միայն այն տարբերությամբ, որ եթե Սոլովյով—Կլյուչևսկին հյուսիս-արևելյան սլավոնական ցեղերի տնտեսական կյանքի պատմության հիմքում դնելով տոհմական սկզբունքը, բացատրում էին ֆեոդալական արտադրական հարաբերությունների առկայությունը հին Ռուսիայում, ապա մեզ մոտ Ն. Ադոնցն առաջինն էր, որ համարձակ կերպով առաջ քաշեց հայկական ֆեոդալիզմի գոյության փաստը։

Սոլովյովը, հետևելով Կավելինին, ռուսական պատմության հին շրջանը կապեց սլավոնական ցեղերի մոտ տոհմական կենցաղի առկայության հետ։ «Տոհմական կապերի քայքայման հետևանքով,—գրում է նա,—հյուսիս-արևելյան Ռուսիայում տոհմական հարաբերությունները կամաց-կամաց անցնում են պետականության», իսկ այդ երևույթը հանդիսանում է սլավոնական «ցեղերի հասարակական և տնտեսական կյանքի գլխավոր ու հիմնական երևույթը»։

Ն. Ադոնցը համարձակ կերպով խոսելով հայկական ֆեոդալիզմի գոյության մասին, նրա կարևոր առանձնահատկությունը համարեց «գերագույն քաղաքական իշխանության բաժանվածությունը»։ Այս տեսակետը ռուսական պատմագրության մեջ զարգացրել է պատմաբան Պավլով-Սիլվանսկին։

«Ֆեոդալիզմի առաջին գլխավոր հատկանիշը,—գրում է Սիլվանսկին,—պետք է ընդունել գերագույն իշխանության բաժանվածությունը, կամ նրա սերտ միաձուլումը խոշոր հողատիրության հետ»։[3]

Ինչպես Ն. Ադոնցը, այնպես էլ Պ. Սիլվանսկին ֆեոդալիզմը չբնութագրեցին որպես արտադրական հարաբերությունների սիստեմ, այլ՝ որպես «քաղաքական իշխանության բաժանվածություն»։

Այո է Ն. Ադոնցի առաջին լուրջ թերությունը։ Նրա երկրորդ, մեծ կասենք, ավելի լուրջ թերությունն այն է, որ նա ամբողջապես աչքաթող արեց գյուղական-երկրագործական համայնքների և ստրկական ինստիտուտի գոյությունը հին Հայաստանում։ Ավելին, շրջանցելով ստրկատիրական-հասարակական ֆորմացիան, զարգացնելով այն հիշտ դրությունը, որ արմենները—հայերը չեն անցել պատմական զարգացման այդ ընթացքը-ը, նա չհասկացավ, որ տոհմական կարգերին հաջորդում է ոչ թե ֆեոդալիզմը, այլև գյուղական-երկրագործական համայնքները և նախաֆեոդալական-բարբարոսական տիպի պետությունը։

[1] Անդ. 383, 457.
[2] Անդ. 455.
[3] С. Соловьев—„История России", т. I, стр. 271—272.
[4] П. Сильванский—„Феодализм в древней Руси", СПБ. 1907 г., стр. 69.

Նախաարտաշիսյան Հայաստանի և նրան նախորդող շրջանի հասարակական և քաղաքական կարգերը բնութագրելիս Հ. Մանանդյանը հիմնականում ընդունում է Ադոնցի եզրակացությունները, սակայն մի վերապահությամբ։

«Ընդունելով, որ արմենների հասարակակարգի հիմքը Աքեմենյան տիրապետության ժամանակ կազմում էր տոհմական կենցաղը, որի մեջ սկսվել էր արդեն որոշ բեկում, և ի նկատի առնելով աղբյուրների տվյալները արմենների բասիլևս-արքայի, ռազմաառաջնորդների և մեծաթիվ ու ընդհանուր աշխարհազորի մասին կարելի է ըստիս եզրակացնել,—գրում է ակադ. Մանանդյանը,— որ հին արմենները, ինչպես և 6—7-րդ դարերում (մեր թվարկությունից հետո) հին սլավոնները, գտնվել են «ռազմական դեմոկրատիայի» այն ընթացաշրջանում, որը հիշատակված է ընդելսի մոտ»։[1]

Պրոֆ. Ա. Սամվելյանի կարծիքով վաղագույն ֆեոդալիզմը մեզ մոտ սկսվում է մոտավորապես Աքեմենյան տիրապետությունից Հայաստանում, այն է՝ մոտավորապես 6-րդ դարից (ն. ք. մեր տարեթվարկության) և տևում է մինչև արաբական տիրապետությունը... «Այդ շրջանի սահմաններում նշմարում ենք,—դրում է նա,—զանազան իրար հաջորդող, հետզհետե զարգացող էտապներ։ Սկզբնական էտապը վաղագույն ֆեոդալիզմն է, երբ տոհմացեղային հարաբերությունների քայքայումից հետո սկսվում է նախարքությունների կազմավորման պրոցեսը, որը զարգանում է Արտաշիսյան հարստության օրով, մանավանդ Տիգրան Մեծի թագավորության ժամանակ»։[2]

Ակադեմիկոս Բ. Գ. Գրեկովը իր հոդվածներից մեկում համարձակ կերպով առաջ քաշեց այն թեզը, որ Արմենիայում արդեն ստեղծվել էին սոցիալական բոլոր նախադրյալները՝ նախնադարյան համայնական հասարակակարգից, գյուղական-երկրագործական համայնքների միջոցով, ֆեոդալիզմին անցնելու համար։ Ճիշտ է,—նշում է ակադ. Գրեկովը,—Հայաստանում համայնական կարգերը կենսունակ էին և շատ գծերով հիշեցնում էին սլավոնական համայնքները, բայց նրանք քննարկված էպոխայում արդեն կորցրել էին իրենց տնտեսական նշանակությունը։ Ստրուկների կացությունը հին Հայաստանում նույնն է, ինչ արևելյան սլավոնական ցեղերի մոտ։ «Մենք,—ավելացնում է ակադ. Գրեկովը,—կանգնած ենք մեր սովետական պատմական պատկերացումները վերանայելու անհրաժեշտության առաջ։ Միջին դարերը Կովկասում սկսվում են ավելի վաղ, քան միջնադարյան Եվրոպայում»։[3]

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը հիմք ընդունելով Գրեկովի այս նոր եզրակացությունները, ավելի առաջ է անցնում և արմենների հասարակական կարգերը բնութագրում է որպես նախաֆեոդալական հասարակություն։[4]

Մեզ թվում է, որ պրոֆ. Ա. Աբրահամյանը իր վերոհիշյալ հոդվածում հիշատ չի մեկնաբանում ոչ ակադ. Գրեկովին և ոչ էլ Մանանդյանին։

---

[1] Հ. Մանանդյան—«Ինքնակալ տիրություն», էջ 84.

[2] Ա. Սամվելյան—«Հին Հայոց իրավունքի պատմություն», հատ. 1-ին, էջ 102.

[3] Б. Г. Греков—„Спорные вопросы периодизации истории СССР (см. „Учительская Газета", 1940 г., 29/XII. (ընդգծ. իմն է։ Ա. Հ.).

[4] А. Манандян—„Проблема общественного строя доаршакидской Армении", стр. 27 (см. «Исторические вопросы» № 15. 1945 г.)

«Արտաշիսյան հարստության շրջանը ֆեոդալիզմի շրջանն»,[1] ինչպես նշում է Աբրահամյանը, դրանք չեն համարում։ Ակադ. Գրեկովը և Մանանդյանը խոսում են ոչ թե ֆեոդալիզմի, այլ ֆեոդալական այնպիսի յուրահատուկ դծերի մասին, որոնք առկա էին հին Հայաստանում։ Նրանք հին Հայաստանի հասարակական և քաղաքական կարգերը բնութագրելիս այդ էպոխան նույնացնում են նախաֆեոդալական-բարբարոսական տիպի պետությունների ժամանակաշրջանի հետ, իսկ հայտնի է, որ բարբարոսական տիպի պետությունները դեռ ֆեոդալական պետություններ չէին։

Մինչև նախաարտաշիսյան հաստատության հասարակական և քաղաքական կյանքի պատմության հարցերը շոշափելը մենք անհրաժեշտ ենք համարում ամենահամառոտ ը ընդհանուր դծերով ցույց տալ, թե որոնք են տոհմական, համայնական և նախաֆեոդալական բարբարոսական պետության առանձնահատկությունները, պետական և հասարակական ինչպիսի կառուցվածք ունեն նրանք։

«Եվ այս տոհմական կազմակերպությունն, գրում է Էնգելսը, իր ամբողջ մանկական պարզությամբ և միամտությամբ զարմանալի մի կազմակերպություն է։ Ամենքան գնում է իր կանոնավոր ընթացքով- առանց զինվորների, ժանդարմների ու ոստիկանների, առանց ազնվականության, թագավորների, փոխարքաների, պրեֆեկտորների և դատավորների, առանց բանտերի, առանց դատավարությունների... Այստեղ չեն կարող աղքատներ և կարիքավորներ լինել—կոմունիստական տնտեսությունը ու տոհմը հանձնում են իրենց պարտավորությունները ծերացածների, հիվանդների ու պատերազմի հաշմանդամների հանդեպ։ Բոլորը հավասար են ը ազատ։ Նաև կանայք։ Ստրուկների համար դեռևս տեղ չկա, նույնպես և, իբրև ընդհանուր կանոն, սովորություն չէ օտար ցեղերին իրանց ենթարկելը»[2]

Տոհմական կարգերի արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսանում է համայնական սեփականությունը։ Այդտեղ ինչ որ ստեղծվում ը գործ է ածվում ընդհանուրի կողմից ընդհանուրի սեփականությունն է։ տիրապետող սկզբունքն է սեփական աշխատանքով ձեռք բերված սեփականությունը, ուրիշի արտադրած արդյունքը չի յուրացվում։

Բոլորովին այլ կառուցվածք ունի գյուղական-հրկրագործական համայնքը։ Պատմական զարգացման հետևանքով միամտությանն առաջացման հիմքի վրա արդեն տոհմական արյունակցական հատերը հետին պլանն են անցնում, տարբեր տոհմի անդամները խառնվում են և հանդես են գալիս տերիտորիալ սկզբունքների վրա հիմնված գյուղական համայնքներ։ Առաջանալով տոհմից, գյուղական համայնքը կտրում է իր պորտալարը բնությունից և հանդես է գալիս որպես ազատ մարդկանց սոցիալական խմբակցություն։ Արդեն գյուղական համայնքում տունը, նրա կցորդը (придаток) ծուխը (двор) պատկանում է համայնքի անդամին որպես նրա սեփականություն։ Չնայած վարելահողը դեռ մնում է համայնքի ընդհանուր սեփականություն, բայց նա հաջորդաբար բաժանվում է համայնքի անդամների

1 Ա. Աբրահամյան—անդ, էջ 38։
2 Ֆ. Էնգելս—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը։ Երևան, 1933, էջ 112-113։

մեջ այնպես, որ յուրաքանչյուրը իր անհատական միջոցներով մշակում է առանձնացված հողակտորը և բերքը յուրացնում է որպես իր սեփականություն։ Գյուղական երկրագործական համայնքը հանդիսանում է նախադասակարգային ագրարային հասարակության զարգացման վերջին էտապը, մի էտապ, երբ նախադասակարգային հասարակությունը թևանցում է դասակարգային հասարակության։ Ահա թե ինչպես է գնահատում Մարքսը գյուղական համայնքի նշանակությունը։ «Գյուղական համայնքը հանդիսանալով հասարակության առաջին կազմավորման վերջին էտապը, միաժամանակ հանդիսանում է անցման էտապ երկրորդական կազմավորման, այսինքն անցման էտապ այն հասարակությունից, որը հիմնված էր ընդհանուր սեփականության վրա՝ հասարակության, որը խարսխված է մասնավոր սեփականության վրա։

Երկրորդական կազմավորումը, ինքնին հասկանալի է, ընդգրկեց մի շարք հասարակություններ. հիմնված ստրկատիրության և նորտատիրության վրա»[1] Ակնհայտ է, որ Մարքսը երկրորդական կազմավորում, այսինքն դասակարգային հասարակություն ասելով, երբեք էլ չէր հասկանում միայն ստրկատիրական հասարակություն, համայնքների քայքայման հետևանքով, նրա բազայի վրա կարող էր ձևավորվել նաև նորտատիրական հասարակությունը։

Արդ, ընդունելով, որ տոհմական կարգերին հաջորդում է ոչ թե ֆեոդալիզմը, այլ գյուղական-երկրագործական համայնքները, աշխատենք պարզել անչափ կարևոր մի հարց, թե գյուղական համայնքների քայքայման հետևանքով պետական ինչպիսի սիստեմ է հաստատվում Նախաարտաշիսյան Հայաստանում։

Շատ ժողովուրդների և այդ թվում արմենները—հայերի մոտ դասակարգային հասարակության պատմությունը սկսվում է պետական և հասարակական կառուցվածքի այնպիսի սիստեմից, որը իր սոցիալական էությամբ և քաղաքական կառուցվածքով չի կարելի համարել ոչ ստրկատիրական և ոչ էլ ֆեոդալական տիպի հասարակություն։ Պատմական զարգացման որոշակի էտապում պատմության թատերաբեմ են իջնում նոր տիպի պետական սիստեմներ, որոնց վերջին շրջանում սովետական պատմաբանները նախաֆեոդալական-բարբարոսական պետություն անունը տվեցին։ Բարբարոսական տիպի պետությունները ստեղծվել են Կովկասում, Անդրկովկասում, Միջին Ասիայում և վերջապես այդ կարգի պետություններից շարքին կարելի է դասել 9--11-րդ դարերի Կիևյան պետությունը։

Բարբարոսական նախաֆեոդալական տիպի պետությունները, որպես կանոն, նախորդել են ֆեոդալական պետություններին և ձևավորվել են հաժայնական կարգերի քայքայման հետևանքով։ Այդ տիպի պետությունները հետազոտողների մի մասը այն պատկերացրել է որպես ֆեոդալական պետություն, մոռանալով, որ նախաֆեոդալական պետության մեջ իշխողն էր ոչ թե ֆեոդալական հասարակական ֆորմացիան, այլ դեռ նոր էր սկիզբ առնում ու ձևավորվում ֆեոդալական կացութաձևը (ուկլադը)։ Հետազոտողների մի այլ մասը փորձեր է կատարել նախաֆեոդալական բարբարոսական պետությունները ներկայացնել որպես ստրկատիրական հա-

[1] Маркс—Энгельс т. I, стр. 284—285 (Ընդգծումը իմ է Գ. Հ.)։

սարտական ֆորմացիա, ամեն կերպ ճգնելով ցույց տալ ստրկատիրական կացութաձևի գերիշխանությունը ֆեոդալական կացութաձևի նկատմամբ։ Եվ վերջապես ուսումնասիրողների մի այլ մասը նախաֆեոդալական բարբարոսական պետությունները դասել են տոհմացեղային քաղաքական միությունների շարքը և բարբարոսական պետությունները պատկերացրել են որպես «ցեղային միություն», «ռազմական միություն» կամ թե «ռազմական դեմոկրատիայի» կարգի պետություն, բացասելով բարբարոսական նախաֆեոդալական պետությունում նախնադարյան համայնական, ստրկատիրական և ֆեոդալական կացութաձևերից որևէ մեկի գերիշխող դերը[1]։

Բայց այդ հետազոտողները սխալվում են։ Նրանք աչքաթող են անում այն կարևոր հանգամանքը, որ նախաֆեոդալական բարբարոսական տիպի պետությունը անցման շրջանի պետություն է, որտեղ, ճիշտ է, սկսվել էր համայնական կարգերի քայքայման պրոցեսը, բայց դեռ կատաղի պայքարի մեջ էին երեք կացութաձևեր, այն է՝ համայնական, ստրկատիրական և ֆեոդալական։ Այդ պայքարում ի վերջո հաղթանակող է հանդիսանում ֆեոդալական կացութաձևը։ Ֆեոդալական կացութաձևի աճման հետ զուգընթաց ստրկատերերն ու ստրուկները, համայնքի ազատ անդամները սկսում են քայքայվել և խտացնում են մի կողմից հողատերերի և մյուս կողմից ֆեոդալական կախման վիճակում գտնվող գյուղական բնակիչների շարքերը։ Հողատեր ֆեոդալական դասի շարքն են անցնում տոհմացեղային ավագանին, համայնքի հարուստ և ազդեցիկ անդամները և նախկին ստրկատերերը։

Հողատերերից կախման վիճակում գտնվող գյուղական բնակիչները կազմավորվում են հասարակական հետևյալ խավերից. ա) այն ստրուկներից, որոնք ազատվում են հողին և կառարում են գյուղացու աշխատանք. բ) համայնքի այն անդամներից, որոնք համայնական կարգերի քայքայման հետևանքով դրվել էին հողատիրոջից կախման վիճակում և գ) կիսազատ այն տարրերից, որոնք համայնական կարգերի քայքայման հետևանքով կորցրել էին իրենց արտադրական միջոցները, նույնիսկ զրկվել հողից։

Նախաֆեոդալական բարբարոսական տիպի պետության զարգացումը նույնպես ընթացել է անհամաչափ կերպով։ Եթե նրա կենտրոնական, ավելի առաջադիմած մասերում արդեն գերիշխող դիրք են ձեռք բերում ֆեոդալական հարաբերությունները և ֆեոդալական կացութաձևը, ապա ծայրամասերում, առանձնապես լեռնային շրջաններում, նախնադարյան համայնական կարգերի քայքայման պրոցեսը դեռ նոր է սկիզբ առնում, իսկ շատ դեպքերում նույնիսկ հանդիսանում է տերապետող արտադրական եղանակ։ Նախաֆեոդալական պետությունը հիմնված էր բազմաթիվ ցեղերի, ավելի ճիշտ քաղաքական, քան տնտեսական կապերի ու միությունների վրա։ Նախաֆեոդալական պետության վարչական և քաղաքական կարգերը, նրա առաջնորդի ֆունկցիաները ավելի բարդ էին ու ընդարձակ, քան «ռազմական դեմոկրատիայի» գերագույն առաջնորդի ֆունկցիաները։

Եթե «ռազմական դեմոկրատիայի» էպոխայում նրա առաջնորդը ուներ միայն ռազմական ֆունկցիաներ, իսկ հասարակական-տնտեսական և քա-

[1] Б. Д. Греков — „Борьба Руси за создание своего государства", Москва. 1945 г. (см. тоже Проф. С. Юшков. «Варварские государства», «Вопросы истории», 1946 г., №1).

դաքական կյանքում վճռական ու որոշիչ դերը պատկանում էր ժողովրդական ժողովին, ապա նախաֆեոդալական պետության առաջնորդը չի հանդիսանում որպես սոսկ ռազմական առաջնորդ։ Նա ոչ միայն ռազմական առաջնորդ է, այլև իրեն ենթակա տերիտորիայի ղեկավար. նա է, որ նշանակում է վարչական պաշտոններ, սահմանում է նրանց վրա հսկողություն, կազմակերպում է հարկերի հավաքման գործը, ղեկավարում է դատական պրոցեսը, կնքում է ռազմա-քաղաքական դաշինքներ, հայտարարում է պատերազմ և դրուժինան առաջնորդում է դեպի մարտ։ Ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանում նրա առաջնորդի իրավունքներն ու պարտավորությունները որոշում և սահմանափակում էր ժողովրդական ժողովը, իսկ նախաֆեոդալական պետության առաջնորդը, ընդհակառակը, ինքն էր սահմանափակում ժողովրդական ժողովի իրավունքները։ Այստեղ ռազմական ուժը միայն զինված ժողովուրդը չէ, այլ հանդես է գալիս իշխանական դրուժինա, որը վճռական դեր է խաղում նախաֆեոդալական պետության կյանքում։ Ռազմական դեմոկրատիան կորցնում է իր նշանակությունը հատկապես այն ժամանակ, երբ նախնադարյան համայնական կարգերը ապրում էին սոցիալական խորը ճգնաժամ, երբ քայքայման պրոցեսն ընդգրկել էր համայնական կարգերի բոլոր բնագավառները։

Ֆեոդալական կացութաձևի զարգացման հետևանքով ռազմական դեմոկրատիան իր տեղը զիջում է նախաֆեոդալական պետությանը։ Մարքսը խոսելով մեծ ու տեղական իշխանների փոխհարաբերությունների մասին, այն համարում է վասալիտետ, առանց լենի կամ լեն՝ հիմնված հարկատվության վրա։ Նախաֆեոդալական պետության զարգացման վերջին էտապում, երբ ֆեոդալական հարաբերությունները ձեռք են բերում ագրեցիկ նշանակություն, երբ առանձին այն մասերը, որոնք մանելով նախաֆեոդալական պետության մեջ, նույնպես բռնում են ֆեոդալիզացիայի ուղին, արդեն նախաֆեոդալական պետությունը հանդես է գալիս որպես սոցիալապես միատարր մի ամբողջություն։ Այս էպոխայում վասալիտետը առանց լենի վեր է ածվում վասալիտետի՝ հիմնված լենի վրա։ Լենը հանդես է գալիս ոչ միայն սոսկ հարկատվության իմաստով, այլ որպես որոշակի հողային տիրապետություն։ Սակայն նախաֆեոդալական պետությունը դեռ տիպիկ ֆեոդալական պետություն չէր։ Եթե ֆեոդալական հասարակական ֆորմացիայի «արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսանում է ֆեոդալի սեփականությունը արտադրության միջոցների և ոչ լրիվ սեփականությունը արտադրության աշխատողի—ճորտի նկատմամբ»,[1] ապա նախաֆեոդալական պետությունում դեռ իրար կողքի գոյություն ունեին երեք կացութաձևեր, որոնք համառ ու կատաղի պայքարի մեջ էին և որոնցից ստրկատիրական և ֆեոդալական կացութաձևերը մրցում էին գերիշխանություն ձեռք բերելու համար։ Այդ պայքարից, պատմական զարգացման հետևանքով, հաղթանակող է դուրս գալիս ֆեոդալական կացութաձևը։ Մի ժամանակ ազատ համայնականը արդեն դրվում է տնտեսական կախման մեջ։ Սակայն հասարակական այս խավը նախաֆեոդալական պետությունում դեռ գլխավոր արտադրող դասը չէր հանդիսանում։ Կախման վիճակում գտնված գյուղական այս բնակիչների կողքին գոյություն ունեին

[1] Հմմ. Կ. (բ)Պ համառոտ դասընթաց, Երևան, 1939 թ., էջ 169—170.

համայնքի ազատ անդամներ, որոնք և հանդիսանում էին նախաֆեոդալական պետության արտադրող հիմնական դասը։ Եվ վերջապես, նախաֆեոդալական բարբարոսական պետությունում պետական իշխանությունը, պետական և վարչական ապարատը դեռ չէր ստացել այն ձևը, որը հատուկ էր ֆեոդալական պետությանը։

Այսինքն՝ 1. Նախաֆեոդալական բարբարոսական տիպի պետությունը դեռ չէր հանդիսանում ֆեոդալական-սենյորական հիերարխիա, որտեղ, ինչպես հայտնի է, տիրոջ և ենթակայի հարաբերությունները որոշվում էին վասալական պարտավորություններով։ Այստեղ դեռ տիրապետող սկզբունքն էր հարկատվությունը, պարտավորությունները, նվիրատվությունը։

2. Նախաֆեոդալական բարբարոսական պետությունը դեռ ամբողջապես չէր աղատագրվել «ցեղային միությունների» և «ռազմական դեմոկրատիայի» շատ ու շատ գծերից։

3. Նախաֆեոդալական պետության առաջնորդը հանդիսանում էր սովորաբար այն առավել դորեղ ցեղախմբի առաջնորդը, որտեղ ամենից առաջ սկսվել էր դասային և սոցիալական շերտավորումը, որտեղ սկսվել էր ֆեոդալիզացիայի պրոցեսը։

4. Ժողովրդական ժողովը, որն այնքան կարևոր դեր էր խաղում տոհմական կարգերում և ռազմական դեմոկրատիայի էպոխայում, այստեղ կորցնում է իր վաղեմի նշանակությունը։ Նրա փոխարեն հանդես է գալիս տոհմա-ցեղային ավագանուց կազմված խորհուրդը։

5. Եթե տոհմական կարգերի և ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանում զինված ուժը հանդիսանում է ժողովուրդը, ապա բարբարոսական պետությունում արդեն հանդես է գալիս իշխանական դրուժինա։ Ռազմական ուժը այստեղ կազմված էր. ա) իշխանական դրուժինայից, բ) ժողովրդական աշխարհազորից և գ) վարձկան ջոկատներից։ Իշխանական դրուժինան արդեն կապված էր իշխանի հետ, ապրում էր նրա բերդում, նրա հաշվին։

6. Նախաֆեոդալական պետության գերագույն առաջնորդը իրեն ենթակա տերիտորիան կառավարում է իր օգնականների միջոցով։ Տոհմացեղային նախկին առաջնորդները ոչ միայն հանդես են գալիս որպես ռազմական առաջնորդներ, այլև վարչական, կառավարչական օրգանների ղեկավարներ։

7. Նախաֆեոդալական պետության առաջնորդի և իշխող դասերի եկամտի աղբյուրը ոչ միայն ռազմական ավարն էր, այլև հարկերը, առևտրական ու դատական մաքսերը և իրենց տնտեսությունից ստացած եկամուտները։

8. Այս նորաստեղծ նախաֆեոդալական պետություններն իրենց հասարակական կառուցվածքով բոլորովին նման չէին անտիկ աշխարհի ստրկատիրական պետություններին։ Նորաստեղծ հասարակությունը հիմնված էր ոչ թե ստրուկի, այլ գյուղական համայնքի ազատ անդամի աշխատանքի վրա։ Այդ էր պատճառը, որ այստեղ ֆեոդալական արտադրական եղանակը դեռ տիրապետող չէր։

Առաջնորդվելով այդ սկզբունքներով՝ աշխատենք ցույց տալ, թե հասարակական ինչպիսի կարգեր գոյություն ունեին Հայաստանում նախա-

գրաշրջության սահմանում։ Նախ՝ նկատենք, որ Վանի շրջանում առհմացեղային մրուրյան հիման վրա առաջացած ուրարտական թագավորությունը, որը շատով ընդգրկեց ամբողջ հայկական բարձրավանդակը, բավականաչափ բարձր գարգացման հասած, անտեսություն և կուլտուրա ուներ։ Ուրարտացիները նոսակյաց երկրագործներ էին, զբաղվում էին նաև անասնապահությամբ, այգեգործությամբ։ Հայկական բարձրավանդակի այն մասում, որտեղ պայմանները բարենպաստ էին, «երկրագործությունը իր սկիզբն էր առել դեռ նեոլիթի ժամանակում։»[1]

Պրոֆեսոր Բ. Պիոտրովսկին կարծիք հայտնելով Իլուրի պեղումների ժամանակ հայտաբերել է հացարույսերի մի քանի տեսակներ՝ գարի, ցորեն, կորեկ, տարեկան, այլև՝ խաղողի կորիզներ, տերևներ, որոնք խոսում են երկրագործության ու այգեգործության գարգացած լինելու մասին։ Արհեստներից գարգացած են եղել երկաթագործությունը, կավագործությունը, քարակոփությունը, մանածագործությունը և այլն։ Հայտաբերել են բրոնզյա, մանավանդ երկաթյա գյուղատնտեսական գործիքներ՝ խոփեր, բահեր, մանգաղներ, այլև բաղմաթիվ զենքեր։ Պրոֆ. Պիոտրովսկին հանգեց կարևոր այն եզրակացությանը, որ Վանի թագավորությունում «մետաղագործության ընդգավառում գերիշխող դերը պատկանելիս է եղել երկաթին։»[2]

Սակայն այդ մեծ պետությունը կայուն և միատարր չէր։ Վանի թագավորությունը, ինչպես և Հին Արևելքի բոլոր պետությունները, ներկայացնում էին իրենց կուլտուրայով տարբեր և զենքի ուժով հպատակեցված մանր երկրների մի միություն...։ Պրոֆ. Պիոտրովսկին ցույց է տվել, որ չնայած տարկությունը, սարկական աշխատանքը Ուրարտուում խաղում էր վճռական դեր, բայց տգրյուրները նրան «հնարավորություն չեն տալիս բացահայտելու Ուրարտուի սարկատիրական կարգերի յուրահատկությունը։ Վանի-Ուրարտուի թագավորությունը չէր հանդիսանում սարկատիրական պետություն (սարկատիրական անտիկ իմաստով), այլ այնտեղ սարկությունը և սարկական ուկլադը մեծ կշիռ ունեին։ Սխալվում է պրոֆ. Ա. Արբրահամյանը, երբ անվերապահորեն գրում է. «Արևելագետ և ուրարտագետ մասնագետները, ինչպես հայտնի է, Ուրարտուի նկատմամբ ասել են իրենց վճռական խոսքը։ Այնպես ակադեմիկոս Ստրուվեի կարծիքով ուրարտական հասարակությունը տոգմա-սարկատիրական հասարակություն էր հանդիսանում։ Այդ թեզը համարձակ դրված է հատկապես պրոֆ. Պիոտրովսկու ստալինյան մրցանակի արժանացած «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան» աշխատության մեջ։

Թանի որ պրոֆ. Ա. Արբրահամյանը հակումն ունի ոչ միայն Վանի թագավորությունը, այլև նախաարտաշիսյան Արմենիան բնութագրելու որպես սարկատիրական հասարակական ֆորմացիա, ապա նա նույնիսկ նեղություն չի քաշում ցույց տալու, թե հատկապես պրոֆ. Պիոտրովսկին իր աշխատության մեջ էջերում է, որ «համարձակ կերպով դրել է այդ թեզը։

7—8-րդ դարերում, երբ Առաջավոր Ասիայում տեղի էին ունենում պետական և քաղաքական խոշոր հեղաշրջումներ, երբ պատմության թա-

[1] Б. Б. Пиотровский—История и культура Урарту. Ереван, 1941. стр. 107. (Ընդգծումը մեր է։ Ս. Հ.)։

[2] Անդ. էջ 181։

[3] Ա. Արբրահամյան—անդ. էջ 36։

սերտաբեմից չքանում էին հին, երբեմնի հզոր պետական կազմավորումները, և հանդես էին գալիս առհասարակ-ցեղային նոր միություններ, որոնք Թվում պատմական ասպարեզ էին բերնում արմենները—հայերը, բանեցով Վանի թագավորության սերիսորիաները։ Հայկական էթնոսի ստեղծման ձևավորվող պրոցեսը սկսվում է 7-րդ դարից (մեր թվ. ա.) և համընկնում է Վանի թագավորության անկման ժամանակաշրջանի հետ։ Ասսիներ—հայերը Ուրարտուի հզորության էպոխայում բազմաթիվ ցեղերի հետ միասին ենթակա էին նրա գերիշխանությանը և քննարկված ժամանակաշրջանում գալիս էին և քաղաքականապես և անտեսապես և կուլտուրայով փոխարինելու Վանի թագավորությանը։ Հայտնի է, որ Վանի թագավորության անկման հետևանքով նրանից առաջին հերթին անջատվեցին հարկական լեռնաշխարհի արևմության մասերը։ Հայկական լեռնաշխարհի հենց այդ մասերում էր, որ ստեղծվեցին առհասարակ-ցեղային քաղաքական երկու նոր միություններ—հայերի (խայեր) և արմենների գլխավորությամբ։ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմության մասերում ստեղծվում է ցեղային մի նոր միություն Արմե (Արմինի) երկրի գլխավորությամբ։ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմության մասերում ստեղծվում է ցեղային մի այլ միություն հայերի (խայերի) գլխավորությամբ, որին դեռ 14-րդ դարում նախքան մեր թվականությունը հեթիթները կոչում էին խայասի։

Այս երկու քաղաքական նոր միությունների գոյացման և ասիմիլյացիայի հետևանքով ստեղծվում է ապագա հայ ժողովուրդը։

«Վանի թագավորության կազմի մեջ էին մտնում—գրում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանը,—այնպիսի երկրներ, որոնք ունեին իրենց կառավարիչների ժառանգական դինաստիաներ և նրանցից շատերի անունները պահպանվել են հայկական միջնադարյան տոպոնիմիկայում. հատկապես այն մարզերի անուններում, որոնք չափազանց կարևոր նշանակություն են ունեցել հայտնաբերի քաղաքական կյանքում՝ հայկական պետականության կազմավորման ասպարեզում։

Արմիններ—հայերը Ուրարտուի հզորության էպոխայում մտնելով ցեղային այն միության մեջ, որին գլխավորում էր Ուրարտուն, ոչ միայն չեն կորցնում իրենց ցեղային առանձնահատկությունները, այլև օրեցօր են առաջադիմում ու զարգանում, որ Ուրարտուի անկումից անմիջապես հետո վերխարինում են ուրարտական ցեղային միությունը և գլխավոր դեր են խաղում նոր ցեղային քաղաքական միությունների կազմավորման ու ձևավորման ասպարեզում։

7—6-րդ դարերում (մեր թվ. ա.) Ուրարտական թագավորությունն ապրում էր սոցիալական խորը ճգնաժամ։ Սոցիալական ներքին հակասությունները մի կողմից, բազմաթիվ ցեղերի և այդ թվում արմիններ-հայերի ակտիվ պայքարը քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելու համար՝ մյուս կողմից, և սաստիկ կիմերների և սկյութացիների արշավանքները երրորդ կողմից, վերջնականապես խորտակեցին Ուրարտուն և խորտակեցին անվերադարձ կերպով։ Ուրարտուի անկումից հետո պատմության թատերաբեմ են բարձրանում արմիններ-հայերը։ Դրախտարար

[1] Г. А. Капанцян—«Историко лингвистическое значение топонимики древней Армении», Ереван, 1940 г.

ենք արմեններ—հայերի նախնական շրջանի պատմության մասին ընդարձակ վկայություններ, վավերագրեր, ազգային մատյաններ չունենք։ Ինարկված ժամանակաշրջանի միակ արժանահավատ վկայությունները պահպանվել են Հերոդոտի, Քսենոֆոնի, Ատրաբոնի երկերում և հետագայում ազգային մատենագրության մեջ։ Արմեններ—հայերի մասին հնագույն շրջանի (6-րդ դարի առաջին կեսեր մեր թվ. ա.) միակ արժեքավոր վկայությունը հանդիսանում է Քսենոֆոնի «Կիրոպեդիան»։ «Պատմաբաններից ոմանք,—գրում է ակադ. Հ. Մանանդյանը,—ոչ մի արժեք չեն տալիս այդ վեպին, իբրև պատմական աղբյուրի։ Սակայն, անժխտելի է, ըստիս, որ նրա մեջ հատկապես արմեններին վերաբերող տեղեկությունները չեն կարող լինել մտացածին և հնարովի և իրենց մեջ որոշ չափով արտացոլում են պատմական իրականությունը»։[1]

Որո՞նք են այն պատմական իրողությունները, որոնք արժեքավոր տեղ են գտել Քսենոֆոնի երկում։ Դժբախտաբար, մեր պատմաբան բանասերները գերազանցապես իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Քսենոֆոնի նկարագրությունների արտաքին կողմի վրա, անուշադրության մատնելով նրա մոտ տեղ դրած սոցիալական այն հարաբերությունները, որոնք հատուկ էին Արմենիային Քսենոֆոնի էպոխայում։

Քսենոֆոնը իր պատմական վեպում նկարագրում է, որ Կիաքսար II-ի և Կյուրոս Մեծի ժամանակ Արմենիան արդեն առանձին թագավորություն էր դաշնակցած միդիացիներին և պարսիկներին։ Արմենների թագավորը Կիաքսարի հայր Աժդահակի դեմ մղած մարտերում պարտվում է և հանձն է առնում չկռուցել ամրոց բերդեր, վճարել հարկեր և պատերազմի դեպքում Աժդահակի տրամադրության տակ դնել հատուկ բանակ։ Սակայն, երբ միդիացիներն ու բաբելացիները պատերազմական գործողությունների մեջ էին, Արմենիայի թագավորը օգտագործում է այդ կացությունը, հրաժարվում է հարկեր վճարելուց և իրեն անկախ է հայտարարում։ Պարսկական թագավոր Կյուրոսը Կիաքսարի հետ մտնում է Արմենիա, ստիպում է Արմենիայի թագավորին հնազանդվելու, հարկատու դառնալու, և այդ դեպքերի կապակցությամբ է, որ Քսենոֆոնը նկարագրում է Արմենիան, նրա բնակիչների զբաղմունքը, հասարակական ու քաղաքական կարգերը։

«Ամեն մի դեպքում,—գրում է Էնգելսը,—հասարակության տնտեսական կառուցվածքը այն հիմքն է, որով ե վերջին հաշվով պետք է բացատրվի յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի իրավական ու քաղաքական հաստատությունների, ինչպես նաև կրոնական-փիլիսոփայական և այլ հայացքների բովանդակ վերնաշենքը»։[2]

Մենք բավականին ուշագրավ վկայություններ ենք գտնում անտիկ հեղինակների մոտ Արմենիայի հասարակական և տնտեսական կառուցվածքի մասին։ Դիմենք այդ վկայություններին։

Արմենների զբաղմունքը։ ա) Երկրագործությունը։

Քսենոֆոնը Արմենիան կոչում է ընդարձակ և բարեկեցիկ երկիր։ Կարդուխների երկիրը անցնելուց հետո, - վկայում է Քսենոֆոնը,—ասում

[1] Հ. Մանանդյան—անդ, էջ 37—38.
[2] Էնգելս—«Անտի-Դյուրինգ», Երևան, 1932 թ., էջ 31.

էին, որ հելլենները կգան Արմենիա, որը մեծ է և հարուստ ու գտնվում է Օրոնտասի Ὀρόντας (Երվանդի) իշխանության տակ։[1]

Արմենները Քսենոֆոնի էպոխայում նստակյաց և երկրագործ ցեղեր էին, երկրագործությունը նրանց մոտ գանվում էր անհամեմատ ավելի բարձր աստիճանում։ Երկրագործությամբ զբաղվում էին ոչ միայն արմենները, այլև նրանց հարևանները։ Քսենոֆոնը և Սթրաբոնը վկայում են, որ այն խալյուբները, որոնք ապրում էին պոնտական լեռնային մասերում, նույնպես զբաղվում էին երկրագործությամբ։[2] Երկրագործությամբ զբաղվում էին նաև կարգուխները և նույնիսկ Հայկական լեռնաշխարհում բնակվող թափառական խաշնարած խալդայների մի մասը։ Հելլենները գրավելով կարգուխների լքված գյուղերը, ոչ միայն հայտաբերում են առատ պաշարներ, այլև տեսնում են գեղեցիկ աներ, որտեղ կային մեծ քանակությամբ պղնձե ամաններ, անուշահոտ գինիներ։ Խալդայների և արմենների մեջ, ըստ Քսենոֆոնի, կար անհաշտ թշնամություն հողերի և արոտավայրերի պատճառով։ Խալդայները գրավելով Հայկական լեռնաշխարհի արոտավայրերը՝ տնտեսական մեծ ճնաս էին հասցնում արմեններին, իսկ վերջիններս նվաճելով հարթավայրերի մշակելի հողերը հույժ աղքատության մեջ էին պահում երկրագործ խալդայներին։

Դիմելով խալդայներին, Կյուրոսը հարցնում է. «Արդ, ճիշտ չէ, որ դուք այժմ աղքատ եք... լավ հողերի կարիք ունենալու պատճառով։ Նրանք հաստատեցին այդ։ Արդյոք չէիք ցանկանալ, որ դուք ևս վճռեիք նույնը, ինչ մյուս արմենները, և թույլտվություն ստանայիք մշակելու Արմենիայի հողերը որքան որ կցանկանայիք։ Եթե մենք հավատացած լինեինք, ասացին խալդայները, որ նրանք մեզ չեն նեղացնելու։ Իսկ դու, ով Արմենների թագավոր, ասաց Կյուրոսը, չէիր ցանկանա, որ քո այժմյան անմշակ հողերը գառնային պտղաբեր, եթե մշակողները համաձայնեին վճարելու ձեզ մոտ ընդունված հարկերը։ Այդ, ասաց Արմենների թագավորը, շատ մեծ արժեք կունենար, որովհետև եկամուտը խիստ կավելանար։ Իսկ դուք, ով խալդայներ, դիմում է նրանց Կյուրոսը, որ լավ սարեր ունեք, արդյոք չէիք թույլ տա, որ արմենները օգավեն նրանցից, իբրև արոտավայրերից, եթե արածացնողները համաձայնվեն ձեզ վճարելու արդար տուրք։ Մեծ օգուտ կստանայինք, ասացին խալդայները, առանց աշխատելու։ Իսկ դու, ով Արմենների թագավոր, չէիր ցանկանա օգտվել այն արոտավայրերից, եթե խալդայներին մի փոքր օգուտ տալով ինքդ ավելի մեծ օգուտ ստանայիր։ Իհարկե կցանկանայի, ասաց Արմենների թագավորը, եթե գիտենայի, որ կարելի է անվտանգ կերպով արոտներից օգտվել։»[3]

Հետաքրքրական և ուշագրավ այս վկայությունը մեզ շատ բան է բացատրում։ Ակնհայտ է, որ հողն այստեղ մասնավոր սեփականություն է։ Հակառակ դեպքում, անիմաստ է դառնում Կյուրոսի դիմումը և արմեններին և խալդայներին։ Հողի օգտագործման դիմաց օգտագործողը պետք է

---

[1] Քսենոֆոն—«Անաբազիս», գիրք 3, գլ. 5, 16, 17։
[2] Քսենոֆոն—անդ, 5, Սթրաբոն—XIV, 3, 10։
[3] Քսենոֆոն—«Կիրոպեդիա», գիրք 3-րդ, գլ. 2, 1—16։

վճարեր որոշ քանակի հարկեր, այսինքն հողօգտագործման արժեքը։ Պարզ է, որ համայնական կարգերում և նույնիսկ գյուղական համայնքների ժամանակաշրջանում ոչ միայն հողօգտագործման հարկեր չկային, այլ մշակված հողը դեռ մնում էր «ցեղի սեփականություն և արվում էր օգտագործման համար սկզբում առնմին, հետագայում սրա կողմից տնային համայնքներին և ի վերջո առանձին անհատներին։ Նրանք կարող էին միայն որոշ չափով սեփականության իրավունք ունենալ այդ հողի վերաբերյալ, բայց ոչ ավելին»[1]։

Բայց արժեններ—հայերը միայն երկրագործներ չէին։ Նրանք զբաղվում էին զարգացման ավելի բարձր աստիճանում, քան նստակյաց երկրագործ ցեղերը։ Երկրագործության հետ միաժամանակ Արմենիայում զարգացած էր այգեգործությունը, կուլտուրական բույսերի մշակությունը։ Նահանջող հելլեններին արմենական գյուղերում գտնում են ոչ միայն առատ պաշարներ—ցորեն, գարի, այլև հին անուշահոտ գինիներ, ոգելից խմիչքներ, չամիչ, դանաղան ընգեղեններ, խողի ճարպ, քնջութ, գառը նշի ե ռևեկնի յուղ։ Արմեններին ծանոթ էին կամերը, աղորիքը և գյուղատնտեսական այլ գործիքներ։ Արմենները գործածում էին նաև երկաթ։

Էնգելսը խոշոր նշանակություն է տալիս երկաթի գյուտին. «Հետևյալ քայլը տանում է մեզ դեպի բարբարոսության բարձրագույն աստիճանը, այն շրջանը, որի ժամանակ բոլոր կուլտուրական ժողովուրդները անց են կացրել իրենց հերոսական դարաշրջանը, այն է՝ երկաթե սրի, բայց նաև երկաթե խոփի ե կացնի դարաշրջանը։ Երկաթը օգտակար դարձավ մարդու համար։ Նա բոլոր տեսակի հում նյութերից վերջինն ու ամենակարեվորն էր, որոնք երբեմնի պատմական հեղաշրջիչ դեր են կատարել... Երկաթը դաշտաբուծություն ստեղծեց խոշոր տարածությունների վրա... Այն արհեստավորին այնպիսի ամուր և սուր գործիք տվեց, որին չէր կարող գիմանալ ոչ մի քար, և ոչ մինչև այդ ծանոթ մետաղ։ Սակայն այդ ամենը տեղի ունեցավ հետզհետե»։

Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Արմենիայում, հողային մասնավոր սեփականությունն ընդարձակվում էր համայնական հողերի հաշվին։ Գյուղական համայնքի ավագանին, ռազմական առաջնորդներն սկսում էին ընդարձակել իրենց հողային տիրապետությունները ի հաշիվ գյուղական համայնքների և նվաճված տերիտորիաների հողերի և հանդես էին գալիս որպես հասարակական նոր խավեր, որոնք նպաստավոր պայմաններում, նույնիսկ առանց բռնության ժամանակության վեր էին ածվում հողատերերի։ Այդ երևույթը նկատելի է նաև Արմենիայում։ Այստեղ ոչ միայն հողը մասնավոր սեփականություն էր, այլև օրինականացված էր հողօգտագործման դիմաց վճարվելիք հարկերի քանակը։ Այդ ավելի էր, քան տոհմական կարգերը և ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանը։

ր) Անասնապահությունը։

Երկրագործության, կուլտուրական բույսերի ու այգեգործության

[1] Էնգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 196.

[2] Անդ, էջ 197.

զարգացման հետ միասին արմենները—հայերի զբաղմունքի գլխավոր ճյուղերից մեկը հանդիսանում էր նաև անասնապահությունը։ Նահանջող հելլենները արմենական գյուղերում բռնագրավում են ոչխարի, խոզի, այծի, կովի, հորթի, հավի միս։ Անասնապահության ընագավառում խոշոր տեղ էին գրավում քաշող ուժերը՝ եզները և ձիերը։ Եզներն օգտագործում էին գյուղատնտեսության մեջ որպես քաշող ուժ, իսկ նրանց կաշուց արհեստավորները պատրաստում էին «գեղջկական ոտնաժաններ»։ Քսենոֆոնի վկայություններից երևում է, որ անասուններն Արմենիայում ոչ թե տոհմի, այլ անհատների սեփականությունն էին։ Նկարագրելով արմենական գյուղերը, Քսենոֆոնը հիշատակում է, որ յուրաքանչյուր արմեն ուներ իր տուն-բնակարանը, անհատական կահկարասին, առատ պաշարներ և անասուններ։ Բնակարաններն ունեին առանձին մուտքեր մարդկանց և անասունների համար։ Գոմերում կային բազմաթիվ և բազմատեսակ անասուններ՝ եզներ, կովեր, ոչխարներ, այծեր, խոզեր, հորթեր և անային թռչուններ։ Անասունները կերակրվում էին խոտով, իսկ խոտը պաշարում էին աշնանը։ Անասնապահությունից առանձնապես զարգացած էր ձիաուծությունը։ Մտնելով Արմենիա, Քսենոֆոնը տեսնում է ձիերի բազմաթիվ երամակներ և այն հարցին, թե ում համար են բուծվում այս ձիերը, արմենները պատասխանում են. «Թագավորի տան համար իբրև տուրք»։ Քսենոֆոնը մի շարք անգամ հիշատակում է, որ արմենների ձիերը, չնայած պարսկական ձիերից փոքր էին, բայց ավելի կայտառ ու գեղեցկուն։ Հերոդոտը Արմենիան կոչում է πολυπροβατος, այսինքն «անասուններով հարուստ երկիր»։ Սարաբոնը ամբողջականացնում է Քսենոֆոնի և Հերոդոտի վկայությունները, ավելացնելով, որ Արմենիան ձիերի համար ուներ շատ ավելի գեղեցիկ արոտավայրեր, որոնք ոչ մի բանով չէին զիջում Մեդիայի արոտավայրերին։ «Երկիրը (Արմենիան),—ասում է Սարաբոնը,—ունի ձիերի համար շատ արոտավայրեր, որոնք Մեդիայից վատ չեն, այնպես որ Նեսեական ձիերը, որ օգտագործում էին պարսից թագավորները, այստեղ էին սնուցանվում։ Արմենիայի սատրապը պարսից թագավորին ուղարկում էր տարեկան 20 հազար քուռակ իբրև տուրք (Միթրայի տոնի համար)»։

Ինչպես հողը, այնպես էլ անասունները Արմենիայում արդեն մասնավոր սեփականություն էին։ Մասնավոր սեփականությունը Քսենոֆոնի էպոխայում աճում էր բուռն թափով և այն համարվում էր հասարակական կյանքի նորմալ երևույթը։

գ) Արմենների կենցաղը, ընտանեկան հարաբերությունները։

Քսենոֆոնը արժեքավոր տեղեկություններ է տալիս իր էպոխայի արմենները—հայերի նիստուկացի, կենցաղի, սովորույթների, ամուսնական և ընտանեկան հարաբերությունների մասին։ Քսենոֆոնը վկայում է, որ Կենտրիտես (Բոհտան-սու) գետի ափին կային արմենական բազմաթիվ գյուղերի ավերակներ, որոնք մնացել էին կարդուխների արշավանքներից հետո։ Այն գյուղը, որտեղ առաջին անգամ մտնում են հելլենները, մեծ էր, հարուստ, ուներ սատրապի համար ապարանք—ամրոց, տների մեծ մասի

[1] «Անաբազիս», գիրք 4, գլ. 5. 35։
[2] Հերոդոտ, գիրք V, գլ. 49.
[3] Սարաբոն, գիրք XI, գլ. 14.

վրա կային աշխարհներ։ Հելլեններին ուր որ գնում էին, ամենուր նրանք գտնում էին ռազմ պաշարներ և զբաղվում էին կերուխումով։ Ուշագրավ են Քսենոֆոնի վկայությունները արմենների ընտանեկան և ամուսնական հարաբերությունների մասին։ Երբ Քսենոֆոնը նկարագրում է, թե ինչպես Գյուրոսը նվաճելով խալդայների երկիրը, սաիպում է արմեններին գայլանոգիր կնքելու նրանց հետ, ի միջի այլոց նշում է. «Այնուհետև բոլորն էլ իրար հավատարմության խոստում տվին և համաձայնության եկան, որ երկու կողմն էլ իրար հանդեպ կպաշտպանեն իրենց ազատությունը, նրանք իրավունք կունենան փոխադարձ ամուսնության»։[1]

Էնգելսն իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ, խոսելով ամուսնության հարաբերությունների մասին, նշում է, որ «մենք ամուսնության երեք գլխավոր ձև ունենք, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են մարդկային հասարակության զարգացման երեք գլխավոր սանդղակներին։ Վայրենության շրջանին համապատասխանում է խմբական ամուսնությունը, բարբարոսության շրջանին՝ զուգավորման ամուսնությունը, քաղաքակրթության շրջանին՝ մենամուսնությունը»։[2]

Քսենոֆոնի վերոհիշյալ վկայությունը խոսում է ոչ թե խմբամուսնության, այլ սարբեր ցեղերի խառը ամուսնության մասին։ Մեզ թվում է, որ նրա էպոխայում Արմենիայի ամուսնությունը կրում էր մենամուսնության բնույթ։ Արմենների թագավորը ուներ մի կին և երկու տղա, որոնք ինչպես արմենների թագավորը, իրավունք ունեին ժառանգելու հոր գահը։ Անհատական ամուսնության հիմնական նպատակը, ինչպես նշում է Էնգելսը, հանգիսանում էր տգամարդու իշխանությունը ընտանիքում և այնպիսի երեխաների սերումը, որոնք միայն նրան կարող էին պատկանել և որոնք պետք է ժառանգեին հոր հարստությունը։ Այս էր անհատական ամուսնության բառացի նպատակը։ «Հողերի լիակատար մասնավոր սեփականություն դառնալը կատարվում է հետգհետե, զուգավոր ամուսնությունից մենամուսնության անցնելուն զուգընթաց»։[3]

դ) Արհեստները, արհեստային արտադրությունը։ Արտաքին ու ներքին առևտուրը, ֆունդամենտը և հազարամյակի կյանքը։

Աշխատանքի հասարակական պարզ բաժանման հետևանքով, ինչպես նշում է Էնգելսը, «հովվական ցեղերը բաժանվեցին բարբարոսական ցեղերի մնացած մասսայից»։ Բայց հասարակությունը կատարում է երկրորդ քայլը։ Հարստությունը բուռն թափով սահում է իրրև անհատների հարստություն։ Արհեստների զարգացման հետևանքով «ստայանանկությունը, մեքենամշակությունը և մյուս հետգհետե առանձնացող արհեստները ավելի ու ավելի բազմաեսակություն և հարտարություն էին ծավալում արտադրության մեջ. երկրագործությունը՝ հացահատիկ, փոքրավոր ընդեղենների և մրգերի հետ միասին այժմ տալիս է նաև ձեթ և գինի, որոնց պատրաստումը մարդիկ արդեն սովորել էին։ Միևնույն անհատը այսպիսի բազմազան գործունեություն այլևս չէր կարող ունենալ. մեջտեղ եկավ աշխատանքի երկրորդ մեծ բաժանումը... Արտադրության՝ երկու մեծ գլխա-

[1] «Ինքնագիր», գիրք 8, գլ. 88. (Ընդգծումը իմն է։ Մ. Հ.)։
[2] Էնգելս.—նշ. էջ 85.
[3] Էնգելս—նշ. էջ 108.

վոր այուղերի--երկրագործության և արհեստի—բաժանվելու հետ մեկտեղ առաջ է գալիս արտադրություն ուղղակի փոխանակության համար, առաջ է գալիս ապրանքային արտադրություն. նրա հետ միասին ծագում է առևտուրը, ոչ միայն ներքին և ցեղի սահմանագլխին կատարվող առևտուրը, այլ նաև արդեն անդրծովյան առևտուրը։ Բայց այդ բոլորը դեռ շատ անզարգացած վիճակում է գտնվում. Քանկագին մետաղները սկսում են առավելապես և ընդհանրական դրամական ապրանք դառնալ, բայց դեռևս չեն կորվում, այլ փոխանակվում են միայն իրենց չսքողված քաշի համաձայն։[1]

Այս երևույթը մենք նկատում ենք նաև Արմենիայում Քսենոֆոնի էպոխայում։ Վերը մենք նշեցինք, որ արմենները նստակյաց և երկրագործ ցեղեր էին, նրանք ունեին անուշահոտ գինիներ, ոգելից խմիչքներ, չամիչ, գանագան ընդեղեններ, դարը նշի և բևեկնի յուղ։ «Յուղեր այստեղ (Արմենիայում) շատ կային, որ գործ են ածում ձիթայուղի տեղ»։ Յուղերն այնքան առատ էին, որ հելլեները ցրտից պաշտպանվելու համար նրանցով լվանում էին ոտքերը, մարմիններն ու ձեռքերը։ Քսենոֆոնը, ճիշտ է, անուղղակի, բայց անգնահատելի տեղեկություններ է թողել արհեստավոր դասի մասին։ Կյուրոսը,—պատմում է Քսենոֆոնը,—գրավելով խալդայների լեռները, որոշում է ամրոցներ կառուցել և հրամայում է արմենների թագավորի աղա Տիգրանին, որպեսզի վերջինս «մարդ ուղարկի հոր մոտ հայտնի, որ նա գա և բերի իր հետ հյուսներ և քարտաշներ այնքան, որքան կլիներ»։[2]

Արմենիայի թագավորը ստանալով այդ հրամանը, հավաքում է բոլորին, «հյուսներին և ուրիշներին, որոնք կարծում էր, որ պետք կլիներին»,[3] և անհապաղ շտապում է Կյուրոսի մոտ։ Արհեստավոր դասի գոյության մասին կողմնակի վկայություններ են պահպանվել նաև Անարազիսում։ Հելլենները գրավելով Տիրիրազի վրանը, բունագրավում են «արծաթի ոտքերով գահույքներ, ըմպանակներ, բռնում են նաև հացարարներին և մատուռակներին»։[4] Ստրաբոնը կարդուխներին անվանում է «նշանավոր ճարտարապետներ, կառուցող վարպետներ, ռազմասեր և ճարտար քաղաքների ու բերդերի պաշարման աշխատանքներում»։[5]

Արհեստներից առանձնապես զարգացած էր զինագործությունը և կաշեգործությունը։ Արմենները զինված էին թեթև և ծանր զենքերով, աղեղներով, նիզակներով։ Պարզ է, որ կահկարասին և զենքերը պատրաստվում էին արհեստավորների ձեռքերով։ Արհեստային արտադրության զարգացման հետ միասին Արմենների մոտ զարգացած էր նաև ներքին առևտուրը։ Տոհմական կարգերում և դյուղական երկրագործական համայնքների էպոխայում մարդիկ արտադրում էին գերազանցապես իրենց սպառողական կարիքները բավարարելու համար։ Այստեղ երբեմն փոխանակությունը եզակի էր և կրում էր պատահական բնույթ։ Հովվական խաշնարած ցեղերի

[1] Անդ. էջ 197—198. (Ընդգծումն Ենգելսինն է. Ս. Հ.).
[2] «Անաբասիս», գիրք 4, գլ. 4, 13.
[3] «Կիրոպեդիա», գիրք 3, գլ. 3, 1—24. (Ընդգծ. իմն է. Ս. Հ.).
[4] Անդ.
[5] «Անաբասիս», գիրք 4, գլ. 22.
[6] Ստրաբոն, գիրք XI, գլ. 1, 24.

մոտ փոխանակությունը տյլ ձևեր էր ընդունում։ Անասունների խոշոր հոտերի առկայության դեպքում սեփական կարիքներից ավելի ավելցուկներ են ստեղծվում և հիմք է դրվում կանոնավոր փոխանակության։ Աշխատանքի հասարակական նոր մեծ բաժանման հետևանքով ստեղծվում են պայմաններ ապրանքափոխանակության և արտաքին ու ներքին առևտրի զարգացման համար։ Ապրանքափոխանակությունը և առևտուրը «բարձրանում, դառնում է հասարակության համար կենսական անհրաժեշտություն... Ստեղծվում է մի դասակարգ, որն այլևս արտադրությամբ չի զբաղվում, այլ զբաղվում է միայն արդյունքների փոխանակությամբ. այդ վաճառականների դասակարգն էր»։

Աղբյուրները մեզ թողել են ուշագրավ վկայություններ Արմենիայի ոչ միայն ներքին, այլև արտաքին առևտրի մասին։ Եզեկիել մարգարեն խոսելով արմենների և փյունիկեցիների առևտրական գործունեության մասին, նկարագրելով Տուր քաղաքի վաճառականոցը, գրում է. «Եւ ի տանէ Թորգոմեայ ձիովք և հեծելովք և ջորւովք լցին զվաճառս քոյ։[1] Արմեն վաճառականները Եփրատ գետի սրընթաց ալիքները նվաճելու համար կառուցել էին կլոր վահանաձև առևտրական նավեր, որոնցով նրանք իջնում էին մինչև Բաբելոն, վաճառում էին բազմաթիվ ապրանքներ, հատկապես հայկական անուշահոտ գինիներ։

Քսենոֆոնը վկայում է, որ Կյուրոսը պահանջում է արմենների թագավորից իրեն մարդիկ տրամադրել հելլեններին «Հնդկաստան առաջնորդելու համար»։[2] Այս վկայությունը ապացուցում է, որ արմեն վաճառականներին ծանոթ էին Հնդկաստան տանող առևտրական ուղիները։

Քսենոֆոնի մոտ մենք գտնում ենք մի շարք վկայություններ նաև ներքին առևտրի զարգացման մասին։ Կյուրոսը մոտենալով Արմենիայի սահմաններին, լրտեսական մի ջոկատ՝ առևտրականների ծածկանվան տակ, ուղարկում է Արմենիա հրամայելով «Ոչ ոքի հետ անարդար չվարվել, որ եթե արմեններից որևէ մեկը հանդիպի, հայտնեն, որ անհանգիստ չլինեն և ասեն, որ ցանկացողները ծախու ապրանքներ բերեն ուր որ իրենք են գտնվելու, երբ նրանք կամենում են ծախել կամ ուտելիք կամ խմիչք»։[3] Այս վկայությունը խոսում է ոչ միայն պարզ ապրանքափոխության, այլև առևտրի մասին։ Քսենոֆոնի էպոխայում շրջանառության մեջ էր մտել նաև դրամը։ Կյուրոսը նվաճելով խալդայների երկիրը, կառուցելով ամրոցներ, իջնում է Արմենիա։ Նրան ընդառաջ է դալիս արմենների թագավորի կինը, բերելով բազմաթիվ թանկագին նվերներ և դրամ։ «Տիկին,— դիմում է նրան Կյուրոսը,— առ այդ փողերը քեզ, ամուսնուդ և որդիների համար գնիր այնպիսի բաներ, ինչ որ ձեռք բերելով զարդարելով ձեր կյանքը կանցկացնեք ավելի լավ կերպով։ Իսկ հողի մեջ բավական կլինի, որ մեր ժառանգները թաղենք, երբ մեզանից որևէ մեկը վախճանվի»։

---

1 Էնդելս, անդ, էջ 201։
2 Հ. Մանանդյան—«Բնական տեսություն», էջ 10։
3 Հերոդոտ, գիրք 1-ին, 194։
4 «Կիրոպեդիա», գիրք 3, գլ. 3։ (Ընդգծումն իմն է։ Ս. Հ.)։
5 «Կիրոպեդիա», գիրք 8, գլ. 4։ (Ընդգծ. իմն է։ Ս. Հ.)։
6 Անդ, գիրք 3, գլ. 3։

Արհեստների, արհեստային արտադրության, ներքին և արտաքին առևտրի զարգացման հետ պետք է որ զարգանային նաև քաղաքներն ու քաղաքային կյանքը։ Դժբախտաբար Քսենոֆոնը մեզ չի թողել ուղղակի վկայություններ քաղաքների և քաղաքային կյանքի մասին, բայց նրա անուղղակի վկայությունները խոսում են այն մասին, որ արմենիերին անծանոթ չէին նաև քաղաքները։ Քսենոֆոնը հիշատակում է «մեծ և հարուստ ու բազմամարդ Դյուզմիթաս» քաղաքի մասին։

Ակադեմիկոս Մանանդյանը Դյուզմիթաս քաղաքը տեղադրում է ժամանակակից Գյումրի—Լենինականի տեղը։[1] Եթե նույնիսկ Գյումրիաս քաղաքի տեղադրությունը չհամընկնի ներկա Լենինականի հետ, մի բան զարդ է, որ Արևելյան Հայաստանում գոյություն է ունեցել մեծ, հարուստ և բազմամարդ քաղաք։ Հասկանալի է, որ քաղաքները, քաղաքային կյանքը, ներքին և արտաքին առևտուրը պատմական այս ժամանակաշրջանում գտնվում էին զարգացման անհամեմատ ավելի ցածր ստադիայում։ Ավելին, քաղաքները հին Հայաստանի տնտեսական կյանքում վճռական ու գերիշխող դեր չէին խաղում։ Այս էպոխայում, ինչպես նշում է Էնգելսը, «գյուղը նույնպես կարող էր իշխել քաղաքի վրա»։[2] Քննարկված ժամանակաշրջանում քաղաք-ամրոցը հանդիսանում էր թագավորների, իշխանների պետական և վարչական, առևտրի ու արհեստային արտադրության կենտրոնը։ Քաղաքային տնտեսությունը դեռ նատուրալ էր, բնակիչների հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր։ Ոչ միայն Արմենիայում, այլ հին Արևելքի բոլոր երկրներում դեռ քաղաքները տնտեսական իշխող դիրք ձեռք չէին բերել։ Միայն սրանով կարելի է բացատրել այն, որ թագավորական իշխանությունները հին Արևելքում այնքան հեշտությամբ փոխադրում էին իրենց մայրաքաղաքներս մի վայրից մյուսը։ Քաղաքային արտադրությունը դեռ մնում էր գոյության անմիջական միջոցների արտադրության ստադիայում և այդ էր պատճառը, որ նա չկարողացավ լուրջ ճեղքվածքներ առաջացնել արտադրության հին եղանակի մեջ։ Քաղաքներում չստեղծվեց լատիֆունդիաների տիպի տնտեսություն, որի հետևանքով ստրկությունը մեզ մոտ ձևաց պատրիարխալ վիճակում և պարարիարխալ ստրկությունը ձևաց գոյության միջոցների արտադրության ստադիայում։

ե) Դասերը։ Դասային հարաբերությունները։

Ֆ. Էնգելսը նշում է, որ «...Առևտրի ընդարձակման, փողի և փողային վաշխառության, հողի սեփականության և հիպոթեկի զարգացման հետ զուգընթացաբար արագությամբ առաջադիմեց հարստության համակենտրոնացումը և կենտրոնացումը մի սակավաթիվ դասակարգի ձեռքում, իսկ դրա կողքին հանգես եկավ մասսաների աճող աղքատությունը և աղքատների աճող մասսան։[3] Այս երևույթը մենք նկատում ենք նաև Արմենիայում։ Քսենոֆոնը իր «Անաբազիս»-ում և «Կիրոպեդիա»-յում բազմիցս հիշատակում է թագավորի, նրա որդիների, ավագների, իշխանների, երևելի արմենների և սոցիալական ավելի ցածր աստիճանի

[1] Հ. Մանանդյան — «Քննական տեսություն», էջ 64.
[2] Էնգելս, անդ, էջ 203.
[3] Անդ, էջ 203.

վրա գտնվող հասարակական խավերի—ծառաների, գեղջուկների, ջրկիրների մասին։ Հայանի է, որ ցեղերի և տոհմերի մեջ չէր կարող դասակարգերի բաժանում տեղի ունենալ։ Հասարակությունը բաժանվում է դասերի և դասակարգերի պատմական զարգացման որոշակի աստիճանում։ Բացի արժենների ընդհանուր սատրապից, Քսենոֆոնը վկայում է առանձին իշխանների մասին, որոնք կառավարում էին երկրի տարբեր մասերը։ Արմենիան Քսենոֆոնի էպոխայում վարչականորեն բաժանված էր երկու մասի—արևմտյան և արևելյան Արմենիայի։ Սակայն Քսենոֆոնը վկայում է, որ Արմենիան ուներ մի սատրապ՝ Օրոնտասը (Երվանդը), իսկ Արևմտյան Արմենիայի՝ Տավրոսյան լեռների հյուսիսային կողմերի կառավարիչ Տիրիբազը ոչ այլ ոք էր, եթե ոչ Օրոնտասի կուսակալը։ Այսպիսով Օրոնտասի օրոք Արևմտյան և Արևելյան Արմենիան արդեն համախմբված էր քաղաքական մի միության մեջ։ Տոհմացեղային կապերը այս շրջանում իրենց տեղը զիջել էին տերիտորիալ կապերին, տերիտորիալ կապեր ամբողջ երկրի համար։ Տոհմացեղային ռազմա-քաղաքական միությունների փոխարեն հանդես են եկել տերիտորիալ քաղաքական միություններ՝ մեկ իշխանի իշխանության տակ։ Սա ավելին էր, քան «ռազմական դեմոկրատիան», որտեղ նրա առաջնորդը ուներ միայն ռազմական ֆունկցիաներ։ Արմենների թագավորը երկիրը կառավարում էր առանձին իշխանների միջոցով։ Դիմելով Արմենիայի թագավորին, Կյուրոսը հարցնում է. «Եթե մեկ իշխան ունենաս և նա հանցանք գործի, արդյոք քույլ կտա՞ս, որ նա իշխի, թե կնշանակես մեկ ուրիշին»[1]։ Արմենների թագավորը առանց տատանվելու պատասխանում է. «Կնշանակեմ մեկ ուրիշին»[2]։

Արմենների թագավորի դատի ժամանակ ոչ միայն ներկա էին պարսկական և միդիական զորավարները, այլև «պատվավոր արմենները»[3]։

Արմենիան նվաճելուց հետո Կյուրոսը որսի է դնում ոչ միայն պարսիկների, այլև արմենների թագավորի տղա Տիգրանի և «ավագանու հետ միասին»։ Հետաքրքրական է, որ ոչ միայն հասարակությունը բաժանված էր դասերի, այլև դատարանը կրում էր դասային բնույթ։ Եթե տոհմական կարգերում և ռազմական դեմոկրատիայի էպոխայում գերագույն իշխանությունը պատկանում էր ժողովրդական ժողովին, ապա այս էպոխայում իշխող դասերի ներկայացուցիչներին դատելու իրավունք ուներ նրան հավասար դատարանը։ Գրավելով Արմենիան, Կյուրոսը պահանջում է, որ նրա թագավորը լեռներից ցած իջնի դատվելու համար։

«Իսկ ով է լինելու իմ դատավորը, ո՞վ է ինձ դատելու»,—հարցնում է արմենների թագավորը։—«Պարզ է,— ասում է Կյուրոսը,— որ դատավորը կլինի նա, ում ատված հնարավորություն է տվել վարվել քեզ հետ և առանց դատ անելու, ինչպես որ ցանկանում էր»[4]։

Ակնհայտ է, որ արմենների թագավորին դատելու իրավունք ուներ միայն ինքը՝ Պարսից թագավոր Կյուրոսը։

Մասնավոր սեփականության աճման զուգընթաց, իշխող դասերը ոչ

---

[1] «Կիրոպեդիա», գիրք 3. գլ. 1։
[2] Անդ. գիրք 3. գլ. 1։
[3] Անդ։ Ընդգծումը իմն է։ Ս. Հ.։
[4] «Կիրոպեդիա». գիրք 3, գլ 1։

միայն ուներին ընդարձակ հողամասեր, անասունների մեծ հոտեր, այլև նյութական և դրամական մեծ հարստություն։ Արմենների թագավորն, ըստ ակադեմիկոս Մանանդյանի հաշվումների, ուներ մոտ 12 միլիոն ռուբլու արժեքով հարստություն։ «Իմ կարողությունը այն հարստության հետ, որ թողել է իմ հայրը, ասում է Արմենիայի թագավորը, հաշվելով արծաթ գրքաժով, ավելի է, քան երեք հազար տաղանդ»։[1]

Ակադ. Մանանդյանը հաշվելով Արմենիայի թագավորի հարստությունը, գրում է. «Ընդունելով բաբելոնական, պարսկական տաղանդի կշիռը մոտ 32,640 գր., Արմենների թագավորի հարստությունը իր կշռով հավասար կլինի 3000×32,640-ով=97,920 կգ արծաթ դրամի։ Իսկ եթե արծաթի և ոսկու հարաբերությունը ենթադրենք այն ժամանակ մոտավորապես 1:10, որն հավանական է, այդ հարստության դրամական արժեքը հավասար կլինի մոտ 12 միլիոն ոսկի ռուբլու»։[2]

Նյութական և դրամական հարստություն ուներին ոչ միայն թագավորը, այլ և նրա կինը, տղաները, իշխանները և առանձին արմենները։ «Արգ,— հարցնում է Կյուրոսը արմենների թագավորին,— ինչպե՞ս կվարվես, եթե նա, (այսինքն իշխանը։ Ս.Հ.) շատ դրամ ունենա, թույլ կտաս որ հարստանա, թե նրան չքավոր կդարձնես»։ «Եթե դրամ ունենա, ասաց թագավորը,— կտանեմ»։[3] Կյուրոսը գերել է արմենների թագավորի տղա Տիգրանի կնոջը։ Նրան գերությունից ազատելու համար պարսիկների թագավորը պահանջում է մեծ փրկավճար։ Տիգրանը կնոջը ազատելու համար դիմում է Կյուրոսին հետևյալ բառերով. «Ես, ով Կյուրոս, իմ անձը կտամ, որպեսզի իմ կինը երբեք ծառա չլինի»։[4] Արմենները նույնպես ունեին հոկայական հարստություն. ահա այդ կարգի վկայություններից միայն մեկը։ Երբ Կյուրոսը խալդայների լեռներից ցած էր իջնում, նրան ընդառաջ են գալիս արմենները։ Արմեններից ոչ ոք, վկայում է Քսենոֆոնը, «չմեռաց տանը ոչ ոչխար և ոչ էլ կին, այլ բոլորն ուրախ լինելով խաղաղության վրա, դիմավորեցին նրան, իրենց հետ բերելով այն, ինչ ամեն մեկն ուներ և համարում էր թանկարժեք»։[5]

Այս ուշագրավ վկայությունները ցույց են տալիս, որ արմենների մոտ նյութական և սոցիալական դիֆերենցիացիան հասարակական կյանքի նորմալ երևույթ էր համարվում։ Այստեղ մասնավոր սեփականությունը արդեն տիրապետող դիրք էր ձեռք բերել և այն անցնում էր ժառանգաբար։ Հարստությունը արմենների մոտ կուտակվում էր ընտանիքում և ընտանիքը հակադրվում էր տոհմին։ Գույքային այդ անհավասարությունը «հակադարձ ազդեցություն էր անում հասարակական կառուցվածքի վրա, հիմք դնելով ժառանգական ազնվականության և թագավորական իշխանության կազմությանը»։[6]

Անհատների ձեռք բերված հարստությունը ապահովելու և սրբազոր-

1 Անդ. գիրք 5, գլ. 1։
2 Հ. Մանանդյան—«Ինն-գան տեսություն», Նամիզագրություն I, էջ 38-39
3 Քսենոֆոն—«Կիրոպեդիա», գիրք 3, գլ. 13։
4 Անդ, գիրք 3, գլ. 37։
5 Անդ, գիրք 3, գլ. 3։
6 Էնգելս, անդ, էջ 126։

ծելու համար հարկավոր էր ստեղծել բոնի հաստատություն։ Այդ հաստատությունը եկավ, հաստատվեց պետությունը,—գրում է Էնգելսը։

Արմենների թագավորի և իշխող դասերի եկամտի գլխավոր աղբյուրը հանդիսանում էր ոչ միայն պատերազմական ավարը, այլև հպատակներից հավաքված հարկերը։ Արմենները հարկեր էին վճարում ոչ միայն սեփական իշխող դասերին, այլև Միդիային ու Պարսկաստանին։ «Սիրելի արք,—դիմում է Դյուրոսն իր բանակին,—արմենների թագավորը առաջ դաշնակից էր ու հնազանդ Գիաքսարին, իսկ այժմ նկատելով, որ նրա վրա հարձակվել են թշնամիները, արհամարհում է մեզ և ոչ դորք է ուղարկում մեզ և ոչ էլ տուրք վճարում։[1] Արմենիան Միդիային տարեկան վճարում էր մոտ 60 տաղանդ, իսկ հիմա, դաշինքը խախտելուց հետո, պետք է վճարեր 100 տաղանդ։ Այսինքն, եթե նա առաջ վճարում էր մոտ 200 հազար ոսկի ռուբլի, այժմ պետք է վճարեր 400 հազար։

Հերոդոտը Պարսկաստանին հարկատու երկրների թվում հիշատակում է նաև Արմենիան։

«Պակայուիկեից, արմեններից և նրանց հարևաններից մինչև Էվքսինյան ծովը,—ասում է Հերոդոտը,—(Պարսկաստանը հարկ էր ստանում) 400 տաղանդ, 13-րդ շրջանն էր այն։[2]

Մատնանշված այս հարկը, ընդունելով պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32,440 գրամ, հավասար կլինի մոտ 13,056 կիլոգրամ արծաթ գրամի... Ուրեմն 400 տաղանդ հարկը հավասար կլինի մոտ 2.419.200 ոսկե մարկի կամ 1.209.600 ոսկի ռուբլու։[3]

Քսենոֆոնը և հետագայում Մարարոնը հիշատակում են, որ բացի գրամական հարկերից, Արմենիան Պարսկաստան էր ուղարկում նաև նատուրալ հարկեր և առանձնապես ընտիր նժույգներ։ Մարարոնը վկայում է, որ Արմենիան յուրաքանչյուր տարի պարսկական արքունիք էր ուղարկում 20 հազար ձի որպես տարքունի հարկ։[4]

գ) Զինված ուժեր.

Առանձնապես ուշագրավ են անտիկ հեղինակների և ազգային ժառանգիրների վկայությունները հայերի զինված ուժերի թագավորական գրուժինայի զինվորական կազմակերպության, բանակի շերտավորման և զենքերի ու նրանց տեսակների մասին։ Արմենիան Քսենոֆոնի էպոխայում ուներ ութ հազար հեծելազոր և քառասուն հազար հետևակ։ Հայկական բանակի այդ քանակը համարյա անփոփոխ է մնում Արշակունիների օրոք։ Ագաթանգեղոսի վկայությամբ Տրդատ թագավորը ուներ 70 հազարանոց բանակ, այդքան զորք ուներ նրա որդի Խոսրովը։ Տրդատը,—գրում է Ագաթանգեղոսը,—«Ճամբում մեծամեծօք, և եօթանասուն հազարաւ ընտիր զորու հանդերձ՝ խազայր զնայր յԱյրարատ գաւառէ՝ ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել ի սահման Ցուզաց»։[5]

---

[1] «Դիր-գնգիս», գիրք 3, գլ. 6
[2] Հերոդոտ, գիրք 3, գլ 93.
[3] Հ. Մանանդյան, անդ, էջ 55.
[4] Հերոդոտ, գիրք 3. գլ 93.
[5] Ագաթանգեղոս.—Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1914, էջ 611.

Փավստոս Բուզանդը նույնպես հաղորդում է, որ Վասակ Մամիկոնյանն ուներ «էնդ ձեռամբն...արք գործոց իբրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք»[1]

Եղիշեի և Փարպեցու վկայությունների համաձայն համարյա այդ քանակի բանակ ունեին Վարդան և Վահան Մամիկոնյանները։[2]

Արմենները, ինչպես վկայում է Քսենոֆոնը, զինված էին տեղերով, աղեղներով, կացիններով, ունեին նետեր, նիզակներ, կրում էին վահաններ։ Առանձնապես աչքի էին ընկնում համարձակ նետաձիգները։ Բանակը բաժանված էր երկու մասի—հետևակի և հեծելազորի։ Կային նաև ծանրագենններ։ Արմենական բանակը շերտավորված էր։ Բացի արմեններից այնտեղ ծառայում էին նաև վարձկան խալյուբները. խալդայները և տաոխները։ «Խալդայները,—վկայում է Քսենոֆոնը,—կամ թալանով էին զբաղվում կամ ծառայում էին վարձով»։

Կյուրոսը խոստանում է, որ եթե նրանք համաձայնվեն ծառայելու իր բանակում որպես վարձկան զինվորներ, ապա նա կվճարի այնքան, որքան ավելին մի ուրիշը երբեք չի վճարի։[3] Որ արմենների բանակը խիստ շերտավորված էր, այդ է ապացուցում հետևյալ վկայությունը. «Ես քեզանից չեմ բաժանվի,—դիմում է Կյուրոսին արմենների թագավորի որդի Տիգրանը,—եթե անձամբ հարկադրված լինեի հետևելու քեզ որպես զումանավար»։[4]

Բանակում ծառայած զինվորները տարբերվում էին ոչ միայն իրենց սոցիալական կացությամբ, այլև արտաքին տեսքով։ Կյուրոսը դիմելով Արմենների թագավորի կնոջը ասում է. «Ա՛ այդ փողերը... դու ուղարկիր որդուդ զորքի մեջ ե նրանցով (այսինքն փողերով գնած հագուստով ու զենքով) ամենազեղեցիկ կերպով նրան զարդարիր»։[5]

Հայկական բանակի աճն ու զորությունը, դասային շերտավորումը փայլուն կերպով ցույց է տվել. Դերթոզահայրը։ Խոսելով Տիգրան Մեծի բանակի մասին, նա գրում է. «Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեցունք, և շերտաւորքն ի ոուսեր ե ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պատածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն. ե որ նոցայն պահապանակաց և զինուց փայլմունք և շողիւնք զթշնամիսն արտահալածեալ»։

Զորքերի այս մեծ թիվը, նրանց զինվածությունը, դասային շերտավորությունը, նրա կազմակերպությունը սեզ կովաններ են տալիս եզրակացնելու, որ այդ զինված ուժերը չէին կարող տոհմական կարգերի, գյուղական համայնքների և նույնիսկ ռազմական դեմոկրատիայի էպոխայի ռազմական ուժը հանդիսանալ։

Արդ, ինչ են ապացուցում այս բազմաթիվ ե բազմազան վկայություն-

---

[1] Փ. Բ ուզանդ—Պատմութիւն Հայոց, ՊՊԲ, 1883, էջ 131.

[2] Եղիշե—Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 123-189. Փարպեցի—Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1904, էջ 160—161.

[3] «Կիրոպեդիա», գիրք 3, 26.

[4] «Կիրոպեդիա», III, 3.

[5] Անդ։

[6] Մ. Խորենացի—«Պատմութիւն Հայոց», էջ 73.

ները։ Նրանք ցույց են տալիս, որ Արմենիայում և արմենների մոտ նյութական, սոցիալական և դասային խորը դիֆերենցիացիան իր ոլորապտույտի մեջ էր առել արմենական հասարակական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառները։

Այս ընթացաշրջանում արմենների հասարակական ու քաղաքական կյանքն ավելի բարդ էր և գանվում էր ավելի բարձր աստիճանի վրա, քան մինչև օրս կարծվել է։ Քննարկված ժամանակաշրջանը, մեզ թվում է, կարելի է բնութագրել որպես նախաֆեոդալական բարբարոսական պետության ժամանակաշրջան, մի ժամանակաշրջան, երբ արմենների մոտ ստեղծվել էին բոլոր նախապայմանները հետագա ֆեոդալական հարաբերությունների զարգացման համար։ Այս էպոխան ընդգրկեց պատմական մի երկարատև ժամանակաշրջան—7—2-րդ դարերը։

Այդ ընթացաշրջանում աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով երկրի էկոնոմիկայում տեղի էին ունեցել կարևոր փոփոխություններ և տեղաշարժեր։ Արհեստային արդյունաբերությունը արդեն սահմանազատվում էր գյուղատնտեսությունից։ Ճիշտ է, թույլ, բայց արդեն նկատելի չափով զարգացել էին նաև արտաքին ու ներքին առևտուրը, քաղաքները, դասերն ու դասային հարաբերությունները։ Էկոնոմիկայում տեղի ունեցած այս կարևոր փոփոխությունների հետևանքով ստեղծվել էին նոր դասեր, հողատեր ազնվականները, նախարարները, ռազմա-ծառայող դասերը, արհեստավորներն ու առևտրականները, որոնք ամեն կերպ նպաստում և օժանդակում էին կենտրոնացնելու պետական ապարատը։ Իշխող դասերի դասակարգային և քաղաքական շահերը պահանջում էին ստեղծել պետական այնպիսի ապարատ, որը ունակ պետք է լինի ոչ միայն կանգնեցնելու դրսի արշավանքները, այլև դսպելու ժողովրդական շարժումներն ու դյուղացիական ապստամբությունը։ Սոցիալ-քաղաքական այս նախադրյալների հիմքի վրա 2-րդ դարում (մեր թվ. ա.) ձևավորվեց նաև հայկական պետականությունը։ Նրա հիմնադիրը հանդիսացավ Արտաշես Ա-ն. իսկ պատմական այդ պրոցեսը հիմնականում ավարտվեց Տիգրան Բ-ի էպոխայում։